ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի բացման խոսքը «Հայաստանում ներառական աճի խթանման քննարկումների հարթակի ստեղծում» ծրագրի շնորհանդեսին

Հարգելի հյուրեր, գործընկերներ, հանդիպման մասնակիցներ

Ողջունում եմ Ձեզ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ հերթական ծրագրի մեկնարկի առիթով: Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության հայաստանյան գրասենյակի հետ մեր համալսարանը սկսում է կարևոր մի ծրագիր, որը կոչվում է «Հայաստանում ներառական աճի խթանման քննարկումների հարթակի ստեղծում»: Այս առիթով ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գործակալության հայաստանյան գրասենյակին՝ վստահության և համագործակցության համար:

Հայաստանի տնտեսության ամրապնդման համար հրատապ է դարձել տնտեսական զարգացմանը նպաստող նոր, ավելի կայուն մոտեցումների և մոդելների մասին քննարկումը:

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետության Կառավարության ռազմավարությունը սահմանում է, որ մարդկային կապիտալի զարգացման, սոցիալական պաշտպանության համակարգի բարելավման, պետական կառավարման համակարգի

արդիականացման, աշխատատեղերի ստեղծման հարցերի հետ մեկտեղ անհրաժեշտ է իրականացնել առաջնահերթությունների համադրում՝ ապահովելու ներառական աճ և բարեկեցություն: Անհրաժեշտ է նաև մշակել հավասար հնարավորությունների ապահովման ոլորտային արդյունավետ քաղաքականություններ:

Առաջնորդվելով Կառավարությանն ու մյուս հիմնական շահակիցներին աջակցելու նպատակադրմամբ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը մշակել է կլոր սեղան-քննարկումների շարք՝ միտված Հայաստանում ներառական էկոնոմիկայի հրատապ հարցերի քննարկմանն ու հասարակական բանավեճի խթանմանը:

Կարծում եմ, որ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության, կրթության, զբոսաշրջության զարգացման և մի շարք այլ թեմաների շուրջ մեր կողմից նախաձեռնված կլոր-սեղանները առկա խնդիրների քննարկման և դրանց լուծումներ գտնելու լավ հարթակ կդառնան:

Քննարկումների արդյունքները հետազոտությունների և ակադեմիական հրապարակումների միջոցով կհամադրվեն և կփոխանցվեն հիմնական դերակատարներին: Մեր համալսարանի նպատակներից է կիրառական հետազոտություններ իրականացնող և խորհրդատվություն մատուցող կառույց դառնալը: Սա հանրապետությունում գործող հիմնական

շահակիցների հետ պարբերաբար համագործակցելու հնարավորություն կընձեռի:

Շնորհակալություն ուշադրության համար, մաղթում եմ արգասաբեր աշխատանք:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

Կորյուն Աթոյան

5.03.2014թ.